ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## ՈՐՈՇՈՒՄ

-- սեպտեմբերի 2021 թվականի №---Ա
ք. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի №251Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը, 30-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշումը և հաշվի առնելով «Էլեգիս Հ.Է.Կ.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) 2021 թվականի օգոստոսի 16-ի №16/08 և օգոստոսի 31-ի №31/08 գրությունները, այդ թվում՝ կից ներկայացված Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության կողմից «Հերմոն» փոքր հիդրոէլեկտրակայանի (այսուհետ՝ Կայան) շահագործման նպատակով տրամադրված 2020 թվականի փետրվարի 28-ի №000059 ջրօգտագործման թույլտվությունը, որում նշված Կայանի ջրառի և ջրահեռացման նիշերը տարբերվում են 2004 թվականի փետրվարի 12-ի Կայանի կառուցման աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության ԲՓ-10 և «Հայաստանի Հանրապետության նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» փակ բաժնետիրական ընկերության 2003 թվականի նոյեմբերի 19-ի փորձաքննական եզրակացություններում նշված Կայանի ջրառի և ջրահեռացման նիշերից՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի հոկտեմբերի 27-ի «Էլեգիս Հ.Է.Կ.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Հերմոն» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու

մասին» №251Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված Կայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0221 լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգել տասնհինգ տարով՝ որոշման՝

1) 1-ին կետում «Հերմոն գյուղի մոտակայքում՝ Այսասի գետի աջ ափին» բառերը փոխարինելով «Եղեգիս համայնքի վարչական տարածքում (գյուղ Հերմոն)՝ Էլեգիս գետի Այսասի վտակի վրա» բառերով, իսկ «մեկ հիդրոագրեգատի համար (630 կՎտ)՝ 15 տարի» բառերը՝ «մինչև 2036 թվականի հոկտեմբերի 27-ը» բառերով.
2) 2-րդ կետով հաստատված հավելվածի 3-րդ կետում՝ «մինչև 2021 թվականի հոկտեմբերի 27-ը» բառերը փոխարինելով «մինչև 2036 թվականի հոկտեմբերի 27-ը» բառերով, իսկ 5-րդ կետում «Այսասի գետի աջ ափի վրա» բառերը՝ «Էլեգիս գետի Այսասի վտակի վրա» բառերով:

2. Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել Կայանի շահագործման համար անհրաժեշտ՝ ճշգրտված ջրօգտագործման թույլտվություն:
3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ՝

1) «Հերմոն» փոքր հիդրոէլեկտրակայանում արտադրվող ամբողջ էլեկտրաէներգիայի գնման երաշխիքի՝ «Էներգետիկայի մասին» օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի «գ» ենթակետով սահմանված տասնհինգ տարվա ժամկետը «Էլեգիս Հ.Է.Կ.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության համար ավարտվում է 2021 թվականի հոկտեմբերի 27-ին.
2) իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հոկտեմբերի 27-ից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝** **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- սեպտեմբերի 2021թ.